

ՀՀ ֆինանսների նախարարություն
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 2/1

4 հունիսի 2014 թ.

Քննարկվեց Ա/Ձ Լիլիթ Ջարգարյանի 25.04.2014 թ-ի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Գյումրու ՏՀՏ 02.04.2014 թ-ի թիվ 2123617 ստուգման ակտի դեմ:

Ա/Ձ Լիլիթ Ջարգարյանի գանգատում բերված փաստարկները.

Ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 14-րդ ու «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածներով ներկայացվում է դիմում-գանգատ վարչական ակտ թիվ 2123617-ի վերաբերյալ գրված առ 02.04.2014 թ-ին:

Անհատ ձեռնարկատերը «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հավելվածով սահմանված կարգի համաձայն 19.03.2014 թ-ի նույն օրվա համար մինչև թաղման արարողության սկսելը՝ ք.Գյումրի, Խանջյան փող. 1ա հասցեի հանդիսությունների սրահի վերաբերյալ փոստի միջոցով ՀՀ ԿԱ ՊԵԿ Գյումրու ՏՀՏ ներկայացրել է Հայտարարություն՝ արտոնագրային վճար վճարող համարվելու մասին, արտոնագրային վճարի վճարման անդորրագրի հետ միասին: Փոստի միջոցով ներկայացնելու պատճառ է հանդիսացել այն, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Գյումրու ՏՀՏ-ում հրաժարվել են ընդունել ներկայացված հայտարարությունը, պատճառաբանելով՝ թե նշված հայտարարությունը պետք է ներկայացվեր արտոնագրային վճար վճարող համարվելու համար որևէ օրվան կամ օրերին նախորդող ցանկացած աշխատանքային օրվա ընթացքում: Խնդիրը կայանում է նրանում, որ հաճախ հատկապես թաղման արարողությունների կազմակերպման պատվերներն տրվում են հենց նույն օրը և դրա պատճառով անհատ ձեռնարկատերը չէր կարող գոնե մեկ օր առաջ իմանալ, որ ունենալու է նման արարողության կազմակերպման պատվեր: Այստեղ հարց է առաջանում, եթե պատվերը տրվում է այն ժամանակ, երբ դրա նախորդող օրը կամ օրերն ոչ աշխատանքային օրեր են, ապա ստացվում է, որ անհատ ձեռնարկատերը պետք է հրաժարվի նշված արարողության կատարման ծառայության մատուցումից, որովհետև չի կարող պահպանել «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի Հավելված 8-ի 5-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները: Նույնիսկ վճարված անդորրագրի վրա նշված ժամից երևում է, որ արտոնագրային վճարի գումարի մուծումից և հայտարարությունը փոստով ներկայացնելուց հետո են Գյումրու ՏՀՏ տեսուչները այցելել անհատ ձեռնարկատիրոջ հանդիսությունների սրահ:

Փոստով ՀՀ ԿԱ ՊԵԿ Գյումրու ՏՀՏ ուղարկված հայտարարությունը հետ է ուղարկել, այն պատճառաբանությամբ, որ չի բավարարվել «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի Հավելված 8-ի 5-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները: Ընդ որում, «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի Հավելված 8-ի 6-րդ կետի համաձայն՝ հայտարարություն ներկայացնելու օրվա ընթացքում սույն հավելվածի թիվ 2 ձևով արտոնագիր չտրամադրելու դեպքում արտոնագիրը համարվում է տրամադրված հայտարարությունը ներկայացնելու օրը, եթե անհատ ձեռնարկատերը կամ իրավաբանական անձը, սույն հավելվածի 16-րդ կետին համապատասխան, կատարել է արտոնագրային վճարի վճարում:

Անհատ ձեռնարկատիրոջ կողմից 19.03.2014 թ-ին նույն օրվա համար կատարվող արարողության արտոնագրային վճարը վճարվել է ամբողջությամբ: Շարադրվածից երևում է, որ անհատ ձեռնարկատերը չի խուսափել արտոնագրային վճարը վճարելուց, արարողության պատվերն ստացել է 19.03.2014 թ-ին ու նույն օրն էլ կատարել է վճարում և համապատասխան նախապատրաստական աշխատանքներ արարողության կազմակերպման ուղղությամբ, իսկ այցելությունը հարկային տեսուչների կողմից եղել է վճարումը կատարելուց և հայտարարությունը ներկայացնելուց հետո:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները Ա/Ձ-ն Լիլիթ Զարգարյանը խնդրում է չեղյալ համարել թիվ 2123617 վարչական ակտը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Գյումրու ՏՀՏ պետի 19.03.2014 թ-ի թիվ 2123617 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ-ն Լիլիթ Զարգարյանի մոտ իրականացվել է օրենքով սահմանված ելակետային տվյալների և գործակիցների ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Գյումրու ՏՀՏ 02.04.2014 թ-ի թիվ 2123617 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 488.848 դրամ:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է.

19.03.2014 թ-ին ժամը՝ 17:20-ին, կատարվել է այցելություն Լիլիթ Զարգարյան Ա/Ձ-ին օրենքով սահմանված ելակետային տվյալների և գործակիցների ճշտության ստուգում իրականացնելու նպատակով:

Այցելությունից պարզվել է, որ Լիլիթ Զարգարյան Ա/Ձ-ն 19.03.2014 թ-ին իրականացրել է գործունեություն՝ հոգեհանգստի արարողություն, առանց ելակետային տվյալների՝ արտոնագրային վճար վճարելու մասին հայտարարություն չի ներկայացրել: Սրահի մակերեսը կազմում էր 308 ք. մ.:

Համաձայն «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հավելվածի, այն դեպքում, երբ հանրային սննդի ոլորտում գործունեությունն իրականացվում է հանդիսությունների, արարողությունների կամ համանման այլ միջոցառումների կազմակերպման համար նախատեսված 100 մ. քառ. և ավելի մակերես ունեցող սրահում, այդ սրահի մասով արտոնագիր տրամադրվում է սույն հավելվածով սահմանված կարգով՝ տվյալ տարվա որևէ ամսվա կոնկրետ օրվա կամ օրերի համար: Ընդ որում, սույն պարբերությամբ նախատեսված կարգով արտոնագիր ստանալու համար արտոնագրային վճար վճարող համարվելու մասին հայտարարությունը կարող է ներկայացվել անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի նախընտրած՝ արտոնագրային վճար վճարող համարվելու որևէ օրվան կամ օրերին նախորդող ցանկացած աշխատանքային օրվա ընթացքում:

Համաձայն «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետի և «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հավելվածի 5-րդ կետի երրորդ պարբերությանը համապատասխան՝ հանդիսությունների, արարողությունների կամ համանման այլ միջոցառումների կազմակերպման համար նախատեսված սրահի համար ստացված արտոնագրերում չնշված որևէ օրվա ընթացքում գործունեություն իրականացնելու համար անհատ ձեռնարկատիրոջից արտոնագրում չնշված՝ գործունեության իրականացման յուրաքանչյուր օրվա համար գանձվում է արտոնագրային վճար՝ սույն օրենքի 8-րդ հավելվածով սահմանված կարգով մեկամսյա ժամանակահատվածի համար տվյալ վայրի մասով հաշվարկված արտոնագրային վճարի չափով: Համաձայն «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի թիվ 8-րդ հավելվածի 9-րդ կետի, հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության մասով գանձվում է արտոնագրային վճար՝ 435500 դրամ գումարի չափով:

Հիմք ընդունելով «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի թիվ 8-րդ հավելվածի 9-րդ կետի և «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ, 25-րդ հոդվածների դրույթներն արտոնագրային վճարի գծով գանձման է առաջադրվել ընդամենը 488.848 դրամ:

Քննարկվող դեպքում, համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Գյումրու ՏՀՏ պետի 19.03.2014 թ-ի թիվ 2123617 հանձնարարագրի, ստուգումն իրականացնող անձինք 19.03.2014 թ-ին այցելել են Ա/Ձ Լիլիթ Զարգարյանին՝ օրենքով սահմանված ելակետային տվյալների և գործակիցների

ճշտության ստուգում իրականացնելու նպատակով: Ստուգմամբ պարզվել է, որ Ա/Ձ Լիլիթ Ջարգարյանի կողմից հանդիսությունների, արարողությունների սրահի միջոցով, որի ընդհանուր մակերեսը կազմում է 308 ք. մ., իրականացվում է հանրային սննդի ոլորտում գործունեություն:

«Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի Հավելված 8-ի 5-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն. «Այն դեպքերում, երբ հանրային սննդի ոլորտում գործունեությունն իրականացվում է հանդիսությունների, արարողությունների կամ համանման այլ միջոցառումների կազմակերպման համար նախատեսված՝ 100 մ2 և ավելի մակերես ունեցող սրահում, և հանրային սննդի գործունեության իրականացման տվյալ վայրի սրահների ընդհանուր մակերեսը չի գերազանցում 600 մ2-ը, հանդիսությունների, արարողությունների կամ համանման այլ միջոցառումների կազմակերպման համար նախատեսված այդ սրահի մասով արտոնագիր տրամադրվում է սույն հավելվածով սահմանված կարգով՝ տվյալ տարվա որևէ ամսվա կոնկրետ օրվա կամ օրերի համար: Ընդ որում, սույն պարբերությամբ նախատեսված կարգով արտոնագիր ստանալու համար արտոնագրային վճար վճարող համարելու մասին հայտարարությունը կարող է ներկայացվել անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի նախընտրած՝ արտոնագրային վճար վճարող համարվելու որևէ օրվան կամ օրերին նախորդող ցանկացած աշխատանքային օրվա ընթացքում»:

Քննարկվող դեպքում գործում առկա ապացույցները վկայում են, որ արտոնագիր ստանալու համար արտոնագրային վճար վճարող համարելու մասին հայտարարությունը Ա/Ձ Լիլիթ Ջարգարյանի կողմից ներկայացվել է ոչ թե նախապես, այլ ստուգման ընթացքում՝ ստուգումն իրականացնող անձանց այցելությունից հետո: Ընդ որում, որ այցելությանը նոխորդած օրը եղել է աշխատանքային օր: Այսինքն, 19.03.2014 թ-ին Ա/Ձ Լիլիթ Ջարգարյանի կողմից հանրային սննդի ոլորտում գործունեությունն իրականացվել է առանց արտոնագրի առկայության: Արդյունքում ղեկավարվելով «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետի, նույն օրենքի 8-րդ հավելվածի և «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ, 25-րդ հոդվածների դրույթներով ստուգման ակտով արտոնագրային վճարի գծով առաջադրվել են լրացուցիչ պարտավորություններ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Չ Ու մ է՝

Ստուգման ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ